

ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ ԱՍՔԱՆԱԶ ՄՌԱՎՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1923 թ. փետրվարից Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիտար նշանակվեց Պապանյան Մուսկյանը, որպիսի պաշտոնը նա վարեց մինչև իր կյանքի վերջը՝ 1929 թ. հոկտեմբերի 23-ը:

Մովսեսյան Հայաստանի մշակութային կառուցմանը դիմավորագրված մտավորականների տրանսպան աշխատանքով այդ տարիներին կյանքի կոչվեցին ուսումնական հաստատություններ ու գիտահետազոտական հիմնարկներ, թանգարաններ, թատրոններ ու զբաղարաններ, լուրջ քայլեր կատարվեցին նոր՝ սոցիալիստական արվեստի ստեղծման ուղղությամբ: Ի պաշտոնն ղեկավարելով հայրենակներ այդ աշխատանքը, Ա. Մուսկյանը բոլոր միջոցառումների անմիջական կազմակերպիչն էր, ոգևորողն ու մասնակիցը: Նրա ուշադրության կենտրոնում հավասարապես եղել են թե՛ պետական համալսարանն իր քաղաքային հոգսերով ու խնդիրներով, թե՛ Հայաստանի հեռավոր գյուղերում կազմակերպվող ու ուսուցիչների, դասագրքերի ու գրեթե անկան պիտույքների խիստ կարիք զգացող դպրոցները, թե՛ Հայաստանի տարածքում սփռված հետախույզների հավաքումն ու թանգարանների ստեղծումը և թե՛ դրսից դրանց համալրումն ահարատացումը:

Առանձին ուշադրություն նվիրելով Հայաստանում մտավորականների մեծ բանակ ստեղծելու գործին, Ա. Մուսկյանը քիչ բան չի արել նրանցից շատերին Հայաստան հրավիրելու, տեղի կադրերին Մոսկվա և լենինգրադ կրթության ուղարկելու, նրանցից լավագույն մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Ոչ միայն Միության տարբեր քաղաքներից, այլև արտասահմանից նրա հասցեով ստացված բազմաթիվ նամակներն ու գրությունները, որ պահվում են Հայաստանի հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվում և որոնք մի մասը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը, այդ ամենի խոստում վկաներն են:

ԻՄՄԱ ՀՈՎՍԵԳՅԱՆ

I

5 մայիսի 1923 թ., Երևան

Ընկ. Ս. Տեր-Գաբրիելյանին՝

Լուսավորության ժողովրդական կոմիտարիատի կոլեգիան իր վերջին նիստում որոշել է խնդրել Ձեզ ընդունել Հայաստանի պետական համալսարանի շեֆությունը:

Ի նկատի ունենալով, որ Երևանը գտնվում է գիտական կենտրոններից հեռու և որ միմիայն Մոսկվայի ներկայացուցչությունն է, որ կարող է կենդանի կապ պահպանել Հայաստանի համալսարանի և գիտական կենտրոնների մեջ, մատակարարելով նրան գիտական գրականություն, ուսումնական պիտույքներ և այլն, հուսով եմ, որ չևր մերժի ընդունել շեֆի կոչումը և աջակցել համալսարանի բարգավաճմանը] բոլոր հնարավոր միջոցներով:

Լուսժողկոմ՝ Ա. Մուսկյան

Մեծահարգ պ. Ա. Մուսվյան

Լուսավորության գործավար Խորհրդային Հայաստանի հանրապետության
երեսն

Հարգելի պ. Մուսվյան

Հայաստանի համալսարանին ի նպաստ այստեղ տրված ցերեկույթին հասույթը եղավ համեստ գումար մի՝ 1500 ֆրանկ, բայց «Ապագայի»՝ մեջ համալսարանի մասին մեր ուղղած կոչելը և այդ ցերեկույթի նախաձեռնությունը ունեցան իրենց ազդեցությունը ուրիշ գաղութներու վրա, մասնավորապես Ամերիկա, ուր մեր օրգանը՝ «Պայքարը»*, բացած է ի նպաստ համալսարանին հանգանակություն մը, որ արդեն 2000 դոլլարի հասնում է։ Իսկ այստեղ ուրիշ ձեռնարկներ և դիմումներ պիտի ըլլան։ Փարիզի ցերեկույթը կազմակերպողներու կողմն զրկած էր համալսարանի վարչությանը հայտնելու համար, թե ինչպիսի գրքերու մասնավորապես պետք ունի համալսարանը, որպեսզի այդ 1500 ֆրանկով գնվեն այդ տեսակ գրքեր և ուղարկվեն, դեռ պատասխան չի եկած։ Այս մասին ես վերջերս խոսեցի ֆրանսացի հայասեր ծանոթ անձնավորության մի, Վիքթոր Պիրարի հետ, որ ծերակույտի հանրային կրթության հանձնախմբի նախագահն է, և խնդրեցի, որ ան մեզի օգնե, որպեսզի այդ փոքրիկ գումարով ստանանք կարելի եղածին չափ մեծ քանակությամբ գրքեր՝ խոշոր զեղչով, խոստացավ ընել այդ բանը և հույս հայտնեց, որ ինչ-ինչ գրավաճառների կրնար նույնիսկ՝ մեզի հետ գիմելով՝ ձրի ստանալ կարգ մը գրքեր, միայն թե շտապ անհրաժեշտ է ցուցակ մը հարկավոր նկատված գրքերուն։ Կիսնդրեմ, ուրեմն, որ հաճեք ինձի ուղարկել մանրամասն ցուցակ մը այդ գրքերուն։ հավանորեն գիտական, տեխնիկական գրքեր են զխավորապես, բայց թերևս ցանկալի նկատվի նաև ունենալ համալսարանի մատենադարանին մեջ ֆրանսական գրականության բոլոր դասական հեղինակներու գործերը, մեծ մատենադեղաներու զխավոր երկերը, սկզբնն մինչև այսօր։

Ինձի հանձնվեցավ երեկ Հայաստանի արվեստագետներու կոչը ուղղված փարիզաբնակ հայ նկարիչներուն։ Հաճույքով պիտի զբաղեմ այդ շատ շահեկան խնդրով. ժողովի պիտի հրավիրեմ ի մոտ ֓արիզի մեր նկարիչներն ու ճարտարապետները, և կհուսամ, որ ուղղած օգնությունը պիտի զրկվի։

Ընդունեցեք հարգալից զգացմանս հավաստիքը։

Ա. Չոպանյան

Յ. 122, ց. 1, գ. 147, թթ. 15 և հակ., 16 և հակ., Բնագիր, Զեռագիր։

* «Ապագա» — քաղաքական, հասարակական շարաթաթերթ։ Լույս է տեսել 1921 թ.՝ Փարիզում։ Որոշ ժամանակ թերթի խմբագիրը եղել է Արշակ Չոպանյանը։

** «Պայքար» — աղգային քաղաքական, գրական օրաթերթ, որը սկսել է լույս տեսնել Ամերիկայում՝ 1921 թ.։

Ժողկոմիստեին

ՀԱՅԿ պետկոնսերվատորիան, որ իր սկիզբն է առել փոքրիկ երաժշտական ստուդիայից 1921 թվականին, զարգանալով և աճելով այժմ դարձել է մի մեծ երաժշտական հիմնարկություն՝ իր բոլոր աստիճաններով և ֆակուլտետներով:

Լուսժողկոմատիս որոշմամբ 1929—1930 ուս. տարվանից պետկոնսերվատորիային առընթեր բացվելու է երաժշտական բանֆակ, որի նպատակն է պրոլետարական կադրերից երաժշտական ասպարեզի համար երաժշտական մասնագետներ պատրաստել:

Պետկոնսերվատորիայի շենքը անցյալ տարիներում, մինչև կոնսերվատորիայի բարձրագույն բաժնի և բանֆակի կազմակերպումը, հազիվ կարողանում էր բավարարել նրա ակադեմիկ պահանջները: Սակայն ներկայումս, երբ պետկոնսերվատորիան աճել ու բարգավաճել է, այժմյան շենքը ոչ մի դեպքում չի կարող դոնե նվազագույն չափով բավարարել նրա ուսումնական պլաններով և դրվածքով պահանջվող կարիքները:

Եթե պետկոնսերվատորիայի շենքի տարածությունը չաճի, շրջալայնվի, լուսժողկոմատիս ոչ մի դեպքում ի վիճակի չի լինի վերակազմելու այն և բանալու նոր երաժշտական բաժիններ և ֆակուլտետներ: Միևնույն ժամանակ լուսժողկոմատիս շունի ոչ մի հեռանկարային պլան փոխադրելու պետկոնսերվատորիան մի այլ՝ կոնսերվատորիայի ուսումնական պահանջները լրիվ բավարարող շենք երևանում: Միակ ելքն այն է, որ պետկոնսերվատորիայի այժմյան շենքի բակում և նրան անմիջապես կից տարածության վրա կառուցվի գոնե 4 դասասենյակ և մեկ դահլիճ:

Նկնելով վերոհիշյալ նկատառումներից՝ խնդրում ենք կարգադրել կոմունալ բանկին փոխարինարար բաց թողնելու լուսժողկոմատին՝ պետկոնսերվատորիային կից դասարաններ ու դահլիճ կառուցելու համար, մի տարի ժամանակով 15 հազար ռուբլի, որպիսի գումարը կմտցվի լուսժողկոմատիս 1929—1930 թվականի բյուջեի մեջ:

Լուսժողկոմ՝ Ա. Մուսվյան

Ճ. 113, ք. 6, գ. 71, թ. 1, Բնագիր, Մեքենագիր:

Մեծահարգ Բաղադրի Արշակ Զուլպանյան

Զեր մայիս 22 թվակիր նամակը ուշ հասավ ինձ, Հայաստանից բացակա լինելուս պատճառով:

Ուրախ և շնորհակալ եմ Զեր անխոնջ աշխատանքի ու հոգացողության համար՝ Հայաստանի, մասնավորապես մեր երիտասարդ համալսարանի կարիքների մասին:

Հայաստանի պետական համալսարանը, որպես նոր, երիտասարդ հաստատություն, կազմակերպչական շրջան է ապրում և քնականաբար կունենա

* Հավանաբար, պետք է լինի 1928 թ. կամ 1929 թ.:

բազմապիսի կարիքներ ինչպես ուսուցողական՝ փորձական ցուցադրական պարագաների, այնպես էլ գիտական գրականության՝ թե՛ հին և թե՛ նոր:

Հայաստանի պետական համալսարանը ներկայումս շատ մեծ կարիք ունի առավելուպես գյուղատնտեսական, ֆիզիկական, քիմիական և բժշկական գիտական աշխատանքների, ինչպես և գիտական հանդեսների և պարբերականների:

Համաձայն Ձեր գրության, ներփակ ուղարկում ենք համալսարանի համար առաջին հերթին պահանջված աշխատանքների ցուցակը:

Կրկին գոհունակությամբ հայտնելով Հայաստանի համալսարանի հանդեպ Ձեր հանդես բերած պատրաստականության համար,

Մնամ Ձեզ հարգող՝ ՀՍԽՀ լուսժողովոմ Ա. Մոսվյան

Ֆ. 122, ց. 1, գ. 147, թ. 14: Պատճեն: Մեքենագիր:

5

1 сентября 1924 г., Судак

Глубокоуважаемый товарищ Мравьян!

Узнав от моего товарища композитора М. М. Ипполитова-Иванова, имевшего в начале нынешнего года в Тифлисе свидание и беседу обо мне с представителем правительства Армении, что Армянское правительство желало бы использовать мой опыт для организации и правильной постановки музыкального дела в Армении и в случае согласия моего на приезд для этой цели в Армению и оказания ожидаемых от меня услуг обеспечило бы меня материально в той или другой существенной форме, я сообщил представителю Армении в Москве С. М. Тер-Габриеляну о своей полной готовности выехать в Эривань в сентябре с. г., и Саак Мирзоевич любезно исходатайствовал разрешение Народного комиссариата просвещения Армении на выдачу мне Арменторгом 1000 рублей на летние работы по инструментовке оперы моей «Алмаст». Многочисленные семейные заботы (семья моя состоит из 10 человек), усугубленные болезнью старшей дочери, требующей систематического лечения, к сожалению, не дали мне возможности закончить инструментовку, но значительную часть этой работы я все же проделал и подготовил для кавказских концертов большую симфоническую сюиту из «Алмаст», являющуюся как бы конспектом всей оперы. По окончании всех домашних дел, недели через три-четыре, я выеду в Эривань.

Буду очень признателен, если о получении этого письма не откажете меня уведомить по адресу: Судак (Крым), Александру Афанасьевичу Спендиарову.

С истинным уважением А. Спендиаров

Ф. 122, оп. 1, д. 117, л. 122. Подлинник. Рукопись.

Սիրելի Ասֆանդ

Ես այժմ լենինգրադում եմ:

Մոսկվայում ստացա Մյուլլերի և Ֆրանկի միջոցով ձեր պատգամը՝ հիմա վրա կարգադրություն* քննելու մյուլլերական ֆոնդի պահեստը: Մի երկու օր Սարյանի* հետ, իսկ Սարյանից հետո ուրիշների հետ նայեցինք և որոշ ընտրություն արեցինք: Դրանից հետո խոստացան տալ նաև պատմական մյուլլերում պահված օտար 16 նկարիչների գործեր, մի հատ էլ Արխիպովի** նմուշից: Ընդհանուր առմամբ այնքան էլ շատ չէ: Մի 30 կտոր, ոչ ավելի:

Այժմ այստեղ եմ նայում, տեսնենք ինչ կստացվի: Այս նամակը ուղարկում եմ Հակոբյանի հետ միասին:

Այստեղ է, ի միջի այլոց, պրոֆ. Օրբելու եղբայրը՝ Ռուբեն Օրբելին, որը գրադարանային գործերին շատ լավ ծանոթ մարդ է և մասնագետ: Պրոֆեսոր[ը] իրավաբան է: Նա ուզում է գալ Հայաստան: Լավ աշխատավոր է: Նրա համար ամենակարևորն այն է, որ իր աղջիկը (թոքախտավոր է) կարողանա դրստել սանատորիայում: Ինչ վերաբերվում է աշխատանքին և վարձատրությանը, համաձայն է բավականանալ քշով: Իմ կարծիքով կարելի կլինի նրան որևէ մանկատան կառավարիչ նշանակել, որովհետև ինքը՝ Օրբելին, այստեղ, իմ տեղեկության համաձայն, լավ ուսումնասիրել է դեֆեկտային մանուկների դաստիարակության գործը:

Երևի ճանաչում ես մյուս երկու Օրբելիներին. մեկը հայտնի Պավլովի ապարանտն է, մյուսը՝ Մառի: Այս երրորդն էլ ընդունակ, եռանդուն աշխատավոր է: Մեզ համար կարող է օգտակար լինել: Սակայն առանց քո կարգադրության ես չվստահեցա նրա հետ խոսել: Ամեն բան կպատմի Հակոբյանը: Եթե կոնկրետ խնդիրները (բնակարան և այլն) հնարավոր է կարգավորվեն, այդ դեպքում հաղորդիր քո որոշումը:

Կոմբարեներով՝ Արտաշես Կարինյան

Մակագրություն. «Ռուբեն Օրբելուն հրավիրել երևան: 20 սեպտեմբերի Մոսկվան»:

Ձ. 122, ց. 1, գ. 97, թթ. 29 և հակ., 30 և հակ.: Բնագիր. Ձեռագիր:

Ընկեր Մոսկվայն

Նախ ընդունիր ընկերական բարևներս: Երևի անսպասելի կթվա իմ այս նամակը, բայց մի վարմանա, որովհետև անսպասելի հանգամանքները ստիպեցին ինձ դիմել անմիջապես քեզ:

* Խոսքը Մարտիրոս Սարյանի մասին է:

** Ա. Ե. Արխիպով — գեղանկարիչ, ՌՍՖՍՀ ժողովրդական նկարիչ:

իհա թե բանն ինչումն է: Ընկ. Արշակ Աղամյանը՝ երբ հրավիրվեց իրև կոնսերվատորիայի վարիչ, նա մի շարք ընկերների ուղում էր իր հետ բերել Երևան, բայց, ինչպես հետո պարզվեց, նա հնարավորություն չունեցավ լիովին իրագործել իր ծրագիրը՝ նախահաշվի չբանականները թույլ չտվին այդ: Մեր ընկերներից մեկը՝ Գուրգեն Միրզոյանը, որ այս տարի ավարտեց Բրիտի կոնսերվատորիան՝ ազատ արվեստագետի տիտղոսով, անմիջապես հրավեր տալով Բաքվի նարկոմպոսի միջոցով և մեկնեց իր պաշտոնավայրը: Սակայն քնտանեկան հանգամանքներից ստիպված, չկարողանալով բնակարան գտնել իր քնտանիքը ևս տեղափոխելու այնտեղ, ստիպված եղավ ետ գալ Քիֆլիս: Ահա ես առիթից օգտվելով, րանի նա ղեռ այստեղ չի տեղավորվել, դիմում եմ քեզ և խնդրում նրան ձեռքից բաց չիջողնել: Ընկ. Գ. Միրզոյանը մեծ փորձառություն ունի ակումբային աշխատանքներ վարելու տեղական բոլոր լեզուներով—հայերեն, թուրքերեն, վրացերեն, ռուսերեն և այլն: Բացի այդ շատ հարմար աշխատավոր է հարվածային հանձնարարություններ կատարելու համար—ազիտ-ուղերձներ, ազիտ-երգեր և ազիտ-պիեսների հրաժրությունների բաժինը կազմակերպելու և ղեկավարելու մեջ: Նա կարող է անփոխարինելի դեր կատարել ազիտ-թատրոնում, կարմիր բանակայինների, կուսգործի, բանֆակի, բանվորական ակումբների մեջ: Բացի այդ, քաջ տիրապետելով թուրքական երաժշտությանը, կարող է պատրաստել երաժշտության ուսուցիչներ և հրահանգիչներ թուրքական կազմակերպությունների և հիմնարկների համար: Մի խոսքով, նա իր շնորհքով կարող է ամեն մի ասպարեզում օգտակար լինել: Երաժշտական համոզմունքներով կանգնած է Մոսկվայի պրոլետարական երաժիշտների ասոցիացիայի տեսակետի վրա: Ահա այս բոլոր հանգամանքներն աչքի առաջ ունենալով, ես առաջարկում եմ նրան անմիջապես հրավիրել տալով բնակարան և փոքր ի շատե տանելի ռոմի: Ես կարծում եմ, որ նրան անմիջապես կարելի է տեղավորել ազիտ-թատրոնում՝ երաժշտական մասի ղեկավար պաշտոնով, իսկ այլ հիմնարկների համար միշտ կարելի է նրան օգտագործել: Եթե ուղենաս, նրա մասին կարող ես տեղեկություն հավաքել ընկ. Աղամյանից, Հ. Տեր-Գրիգորյանից և այլն: Եթե ես վստահ չլինեմ նրա ընդունակությունների և օգտակար ուժ լինելու մասին, ես երբեք չեմ դիմի քեզ: Սպասում եմ պատասխանի:

Իսկ ինչ վերաբերում է կոնսերվատորիայի ներկա վիճակին, ես կարծում եմ, որ այժմ դու պետք է փոքր ի շատե գոհ լինես: Կարծում եմ, որ ընկ. Ա. Աղամյանը կարողարացնի քո բոլոր հույսերը՝ կոնսերվատորիան վերակազմելու և նրան ճիշտ ուղու վրա դնելու տեսակետից: Ճիշտ է, ոչ լիովին, բայց և այնպես տվյալ պայմաններում նա առայժմ ավելին անել չի կարող և պահանջել էլ չի կարելի:

Ներիր, որ այսքան զբաղեցնում եմ քեզ ինձանով, բայց հուսով եմ, որ առաջարկս հաշվի կառնես և ընկ. Գուրգեն Միրզոյանին հարմար պաշտոնով կհրավիրես Երևան: Սպասում եմ քո պատասխանին:

Ընկերական բարենեւրով՝ Հակոբ Հովհաննիսյան

Հասցե. Тифлис—ул. Троицкая № 6. Айартун. Հանձնել ինձ:

Ֆ. 122, ց. 1, գ. 743, թթ. 4 և հա., 5 և հա.: Բնագիր. Ձևագիր:

* Երաժշտագետ, 1924 թ. նշանակվել է Երևանի կոնսերվատորիայի դիրեկտոր:

Ընկ. Յալուրյան՝

Խնդրում եմ զրափոր շնորհակալություն ձեռկերպեր արքայի արձանի՝[»] գլուխը գտնելու համար.

1. Էջմիածնի թանգարանի վարիչ ընկ. Սենեքերիմ Տեր-Հակոբյանին՝ նրա եռանդուն աշխատանքի համար՝ արձանի գլուխը գտնելու գործում.

2. Մարագուլովին՝^{***} արձանի գլուխը անվտանգ պահելու և պետությանը հանձնելու համար.

3. Աշխարհբեկ Լոռու Քալանթարին՝^{****} արձանի գլուխը գտնելու գործին եռանդուն մասնակցելու համար.

4. Համարյուրի շրջգործկոմի նախագահ՝ Վարդանյանին և միլպետ Նազարյանին՝ այն աջակցության համար, որ նրանք ցուցաբերել են արձանի գլուխը գտնելու գործին:

Մուսվյան

Յ. 122, ց. 1, գ. 262, թ. 1, և հակ. Բնագիր: Ձեռագիր:

Մեծարգո պ. Ա. Մուսվյան

Հուսավորության գործավար հորհրդային Հայաստանի հանրապետության Երևան

Հարգելի պ. գործավար

Իրեկ իմացա, որ մեր մեծանուն բազմավաստակ գրագետ Շիրվանզադեն Երեք ամիս առաջ նամակ մի ուղղած է Հայաստանի կառավարությանը, հայտնելով հայրենիք դառնալու իր փափագը և ցարդ պատասխան չէ ստացած:

Այդ մասին ան խոսած է պ. Երզնկյանին*, որ համակրանքով ընդունած է անոր այդ հայտարարությունը, և, նամակն առնելով, ինքն իսկ ուղարկած է դայն Երևան:

Շիրվանզադեի պես հեղինակավոր և ամենքեն սիրված ու հարգված գրագետի մեր Հայաստան վերադարձը նշանակալից ու թելադրական ղեպք մը կրնա ըլլալ՝ զազուկներու մեջ հորհրդային Հայաստանի հանգեպ համակրության շարժումը արծարծելու նպատակով, Հայաստանի կառավարությունը, տարակույս չունեմ, որ սիրալիր ու բարյացակամ վերաբերմունք ցույց կտա ղեպի այդպիսի խնդրանք մը, չի զլանար իր օգնություն, որպեսզի Շիրվան-

* Հայկ. Յալուրյան—այդ տարիներին եղել է ՀՍԽՀ լուստողկոմի տեղակալը:

** Խոսքը՝ Համարյուրի (այժմ՝ Արտաշատի) շրջանի Դվին գյուղում գտնված հնագիտական արժեք ներկայացնող քարե արձանի մասին է:

*** Ասորի ուսուցիչ՝ Դվին գյուղից:

**** Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի գիտնական քարտուղարը:

* Խոսքը հոգժողովում Արամայիս Երզնկյանի մասին է:

զադեն իր աղջկան հետ կարենա դառնալ հայրենիք, իր ազգի կենտրոնավայրը, իր կնոջ և որդու մոտ, որոնցմե ստացած լավ լուրերը խորհրդային Հայաստանի մեջ ի հայտ եկող վերաշինության գեղեցիկ շարժման մասին՝ իրեն հաճույք կպատճառին:

Ինձ կթվի, թե կառավարությունը պատասխանած է իրեն, բայց այդ նամակը թերևս ճամբան կորուսված է: Այս քանի մը տողերը կգրեմ քեզի, հարգելի պ. գործավար, որպեսզի գիտենաք, թե կառավարության պատասխանը չէ հասած մեր պատվական հայրենակցին ձեռքը և հաճիք հարկ եղածն ընել անոր ազնիվ փափագին իրականացումը փութացնելու համար:

Սիրալիր հարգանքներով Ձեր Ա. Չոպանյան

Ֆ. 122, ց. 2ա. գ. 178, թթ. 186 և հակ., 187 և հակ. Բնագիր: Ձևագիր:

10

21 փետրվարի 1926 թ., Թիֆլիս

Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովոյիսար ընկ. Մռավյանին
Ձեկուցում

Պարտք եմ համարում Ձեզ տեղեկացնել, որ Խորհրդային Հայաստանի լուսժողովոյի հանձնարարությամբ իմ ձեռնարկած Բացատրական հայերեն բառարանի Ա գիրը վերջացրի գրել փետրվարի 20-ին:

Աշխատանքիս այս մասը պարունակում է մոտ 14.000 բառ և ունի այնպիսի ծավալ, որ կգրավե 500 մեծադիր մանրատառ երկսյունակ երես՝ Դադբաշյանի Հայ-ռուսերեն բառարանի դիրքով: Զափերով* բառարանի վրա (որ բաղկացած է 849 երեսից, որոնցից Ա գիրը գրավում է 154 երես), իմ աշխատանքը ամբողջ գործի 2/11 մասն է կազմում, ըստ Հայկազյան բառարանի (2201—398)՝ նույնպես, իսկ ըստ այլ բառարանների (Աճառյան, Ամատունի, Դադբաշյան)՝ մի փոքր պակաս: Միջին հաշվով կարելի է ասել, որ իմ կատարած ամբողջ գործի 1/6 մասն է կազմում:

Աշխատանքն սկսելու օրից անցել է 4 տարի, 1 ամիս, 6 օր: Սակայն այս ժամանակամիջոցից պետք է դուրս ձգել ավելի քան մի տարի՝ երբ այս կամ այն պատճառով հնարավորությունից զրկված եմ եղել աշխատելու: Իսկ աշխատանքի 3 տարվա ընթացքում իմ աշխատանքի ժամերի զգալի մասը ստիպված եմ եղել նվիրելու ուրիշ գործերի՝ իմ և ընտանիքիս ապրուստը հայթայթելու համար: Կարիք չկա ապացուցելու, որ լսմանական 33 ուրբով, որ տալիս է ինձ լուսժողովմատը այս աշխատանքի համար, պլյուս այն չնչին գումարը, որ մնում է մեզ կնոջ տանից, սրա ծախսերը հոգալուց հետո, բավական չեն 6 անձից (այժմ 5 անձից) բաղկացած ընտանիքիս թեկուզ ամենահամեստ ապրուստի համար:

Ի նկատի ունենալով գործի կարևորությունը՝ ցանկալի էր այնպիսի սլայման ստեղծել, որ ես հնարավորություն ունենայի այս բառարանին նվիրելու մաքսիմումն իմ աշխատանքի ժամերի՝ որպիսին հնարավոր է սրա նման ծանրատաղտուկ և հոգնեցնող գործի մեջ: Սրա համար հարկավոր է հոնորարս

* Հաջորդ բառն անընթեռնելի է:

հասցնել ամսական գոնե 100 ռուբլու: Այս դեպքում ես կարող կլինեմ, նորմալ պայմաններում, ամբողջ գործը վերջացնել 6 տարվա ընթացքում:

Իմ այս առաջարկությունը միանգամայն համապատասխանում է լուսժողովոմի և իմ մեջ կնքված պայմանագրին, որի մեջ ասված է. «Հայաստանի կառավարությունը, ցանկանալով հնարավորություն տալ Ստ. Մալխասյանին, տնտեսական հոգսերից ազատ, իր ժամանակն ու ուժերը նվիրելու հիշյալ բառարանի հորինմանը, հանձն է առնում պարտականություն՝ բառարանի հորինման ու տպագրության ընթացքում հատկացնել նրան և նրա ընտանիքին ապրուստի միջոց, ամսե-ամիս վճարելի, որ ներկայումս սահմանվում է ամսական երկու միլիոն ռուբլի, որ, սակայն, կարող է փոփոխվել՝ նայելով դրամի և մթերքների արժեքներին»:

Ավելորդ չեմ համարում այս էլ ավելացնել, որ պայմանագիրը գրելու ժամանակ ընկ. Սուրխաթյանը, համաձայն ժամանակի լուսժողովոմ Պ. Մակինցյանից իրին տրված հրահանգի՝ առաջարկեց պայմանագրի մեջ մտցնել այս կետը ևս, թե բառարանը վերջանալուց հետո Հայաստանի կառավարությունը տալիս է Ստ. Մալխասյանին վայելուչ վարձատրություն: Սակայն ես կամովին հրաժարվեցի այս իրավունքից, հայտարարելով, թե իմ կատարյալ վարձատրությունը կլինի հենց ինքը՝ բառարանը: Երբ սա գրուիս գա, էլ ոչ մի ուրիշ վարձատրություն, ոչ էլ կյանքս, աչքումս ալլևս արժեք չեն ունենա:

Աշխատելու ուժ և փափագ ես ունեմ, իսկ աշխատանքիս արագ ընթացք տալու միջոցը Ձեր ձեռքին է:

Խորին հարգանքներով առ Ձեզ

Ստ. Մալխասյան

Ձ. 122, ց. 1, գ. 912, թթ. 164 և հալ., 165: Բնագիր: Ձեռագիր:

11

24 մարտի 1928 թ., Երևան

Հարգելի ընկ. Մալխասյան

Ձեր փետրվար 21 նամակը ժամանակին ստացել եմ և հազար ներողություն եմ խնդրում ուշ պատասխանիս համար: Ուշացման պատճառն այն էր, որ ամսույս սկզբներին պետք է գալի Թիֆլիս և ուզում էի անձամբ պատահել Ձեզ:

Այսու նախ մեծ ուրախությունս եմ հայտնում Ա գիրը վերջացնելու առթիվ: Ձեզ հետ միասին ես էլ ցավում եմ, որ ամբողջ գործի 2/11 վրա ստիպված եք եղել աշխատելու 4 տարի: Անշուշտ դա շատ է և դրա մեղքը Ձեզ վրա չի ընկնում: Այդ մեղքը ես վերցնում եմ լուսժողովոմի վրա: Մեր ընդհանուր աղքատությունը գլխավոր պատճառն է լուսժողովոմի դեպի Ձեզ ունեցած ոչ բավականաչափ խնամքոտ վերաբերմունքի՝ նյութական ապահովության խնդրում:

Սակայն ուրախ եմ այժմ Ձեզ հայտնելու, որ հնար ունիք այս մարտ ամսից կանոնավոր կերպով Ձեզ տալու ամսական մեկ հարյուր ռուբլի: Դրանով գուցե մինիմալ հնարավորություն ընձեռած լինիք Ձեզ, հետագա աշխատանքները տանելու քիչ ավելի նորմալ պայմաններում:

Թիֆլիս գալու առաջին առիթից կօղտվեմ Ձեզ մոտ մտնելու և անձամբ շնորհավորելու կատարված աշխատանքի առաջին ուրախալի արդյունքի համար:

Խորին հարգանքներով՝ լուսժողկում Ա. Մուսվյան

Ֆ. 122, ց. 1, գ. 912, թ. 163, Պատճեն: Մեքինագիր:

12

19 հուլիսի 1926 թ., Երևան

Հարգելի բնկեր Ա. Մուսվյան

Մեր ինստիտուտի ընկերներից մեկը՝ Գ. Սևակը, լենինգրադում կայանալիք էսպերանտոստների համաշխարհային 6-րդ կոնգրեսին ներկա լինելու համար գնալուց առաջ եղել է Ձեզ մոտ, խոսք է բացվել էսպերանտո լեզվի մասին և ինչպես նա է ասում, Դուք ասել եք, թե «եթե այսուհետև հոգվածներ կլինեն էսպերանտո լեզվի մասին, «Խորհրդային Հայաստան» թերթում կարող են տպվել»: Այդ պատճառով ներկայացնում եմ այս փոքրիկ հոդվածը՝ խնդրում եմ անձամբ խմբագրեք և ուղարկեք տպելու:

Օգտվելով առիթից, հարցնում եմ մի ուրիշ հայցի մասին: Ուղիղ մեկ ամսից հետո լրանում է հայկական առաջին թնդանոթի 21-րդ տարեդարձարդյոք լավ չէ՞ր լինի «Խորհրդային Հայաստան» մեջ տպել մի մեծ հոդված այդ տարեդարձի առիթով՝ իբրև հիշողություններ անցյալից: Հայկական առաջին թնդանոթի գործողություններին ակնատես եմ եղել. այդ ժամանակներին՝ 1905 թվականին, ես Շուշիումն էի, բուլնիկների գաղտնի տպարանում. որ պահում էի իմ սենյակում (թուղթիկները շարող-տպողը ես էի): Ի միջի այլոց, բուլնիկների միջոցով ձեռք բերված այդ թնդանոթն իմ ներկայությամբ պատրաստեցին և տարան հեղափոխության դիրքերը՝ կռվելու ցարիզմի դեմ... Այդ թնդանոթը ունեցավ այն հրաշալի արդյունքը, որ փրկվեց Շուշիի և նրա շրջակայքի ամբողջ հայ աղգաբնակչությունը...

Պատասխանը խնդրում եմ ուղարկեք խմբագրատուն. ես այնտեղից կստանամ:

Հարգանքով՝ Արտաշես Ոհանջանյան

Ֆ. 122, ց. 2ա, գ. 178, թ. 108: Բնագիր: Ձեռագիր:

13

24 հունիսի [1927 թ.]*, Երևան

Խիստ շտապ

Բաբև, Սերո**

Իրեն՝ Լ. Քալանթարի*** ասելով, դու հեռագրով մի քանի անգամ հրավիրել ես նրան Բաթվի հայ թատերական խմբի ռեժիսոր, որի համար այդ

* Տարեթիվը վերականգնված է ըստ 15-րդ փաստաթղթի:

** Նամակն ուղղված է Բաթվի Հայարտան աշխատակից Սերո Մանուցյանին:

*** Լևոն Քալանթար—Հայաստանի առաջին պեթթատրոնի զխավոր ռեժիսորը:

հրաւիրել հող դարձնելով ոտքի տակ, Քալանթարը խիստ պահանջներ է ներկայացրել ինձ իր հետագա աշխատանքների համար՝ Երևանում, Իսկ Թիֆլիսի մեր լավ բնկերներն իրենց հերթին լավ խոստումներով իրենց կողմը քաշեցին Բուրջայանին։*** Սեղ համար ստեղծվել է հիմար դրութիւն, Քալանթարին ոչ մի կերպ չեմ զիջի, ինդրում եմ անմիջապես հեռագրես նրան Երևան և հրաժարվես նրա ծառայութիւնից։ Այդ մասին հեռագրով հայտնիի նաև ինձ։ Եման խնդիրները պետք է լուծել իմ միջոցով, թե չէ շունշանորդիները օգտագործում են մեր ամեն մի շահամայնեցված քայլերը։

Կոմբարեններով՝ Ասֆանդ

Ֆ. 122, ց. 2ա, գ. 178, թ. 167։ Բնագիր։ Զեռագիր։

14

5 августа 1927 г., Москва

Тов. Мравьян

Ваше письмо, адресованное в Арменторг, получил и сейчас же выехал на ст. Удельную к Р. Н. Симонову (он сейчас там отдыхает). Долго беседовали с ним и решили обратиться к названным Вами лицам. Но вся беда в том, что каждый из них здесь имеет уже работу и сейчас никто не соглашается. О Смышляеве не приходится и говорить, потому что он по горло занят здесь, и таких, как он, режиссеров, в Москве нет, за исключением Станиславского, Мейерхольда и Таирова. Он считается самым лучшим учеником К. С. Станиславского и работает в театре МХАТ. Татаринов, Демидов и Попов также заняты в своих театрах и здесь они гораздо больше зарабатывают, чем 200—250 рублей и потому рассчитывать на них не приходится. Что же касается мало известных режиссеров, то их вообще трудно рекомендовать и мне кажется, что об этом говорить ни стоит. Может быть, через некоторое время, когда уже все съедутся, будет возможно кого-нибудь пригласить, сейчас же никого в Москве нет, чтобы можно было вести переговоры. Недельки через 2—3 уже откроются все театры и тогда больше будет возможности, чем теперь.

Во всяком случае я и Рубен Николаевич об этом очень много думали, но пока что определенно ни к чему не пришли.

Я сегодня же обо всем хочу написать Мамикону Артемовичу Кеворкяну.

Что же касается приезда Симонова Р. Н. на 2—3 постановки в Эривань,—это возможно только летом, когда их театр будет или закрыт или они будут на гастролях. Он сам представляет эту работу следующим образом. Постановки будет вести сам с одним или двумя ассистентами, которых возьмет с собой отсюда. За постановку он здесь берет в театрах

*** Արշակ Բուրջայան—ոսծիւոր, 2002 արվեստի փաստագրոր գործիչ։ Այդ տարիներին աշխատել է Թիֆլիսի հայկական դրամատիկական թատրոնում։

от 750 рублей. Срок постановки от одного до двух месяцев. О овонх условиях он, наверное, сам напишет.

Мы очень ждали Вашего приезда сюда, потому что опять возникают некоторые затруднения со сметой.

Художник Аладжалян уже сдал все экзамены в ВХ учил[ище]. принят, но вся беда в том, что не имеет комнаты. Занятия мы начинаем 15 сентября, когда съедутся все товарищи. Если будут какие-либо поручения, напишите, выполню с большой любовью.

Привет Вам от Р. Н. Симонова.

Н. Кечекезян*

Ф. 122, оп. 2а, д. 178, лл. 84, 85. Подлинник. Рукопись.

15

23 օգոստոսի 1927 թ., Թիֆլիս

Հարգելի ընկ. Մոավյան

Նամակս գրում եմ Ձեզ Թիֆլիսից: Այստեղ գալուս պատճառը մեր ռե-
ժիսորներն են, որոնք երկուսն էլ մեզ անակնկալի բերին սեզոնի նախօրեին:

Լևոնը* օգոստոսի 10-ին մեզ պաշտոնապես հայտարարեց, որ չկարողա-
ցավ մեզ հետ համաձայնության գալ իր աշխատելու պայմանների մասին,
ուստի և իրեն ազատ է համարում գլխավոր ռեժիսորի պարտականությունից
և առաջարկում է հրավիրել իրեն առանձին բեմադրությունների համար, ինչ-
պես այդ արվում է Բուրջայանի նկատմամբ: Այս հայտարարությանն առիթ
ծառայեց այն հանգամանքը, որ մենք չընդունեցինք Լևոնի առաջարկը՝ Գավ-
րոշին և Ալմաստին** վերահրավիրելու մասին:

Թե՛ ընկ. ընկ. Յաղուբյանն ու Կարոն*** և թե ես շատ աշխատեցինք հա-
մոպել Լևոնին, որ ետ վերցնի իր հայտարարությունը, սակայն մեր ջանքերը
ապարդյուն մնացին:

Իմ տպավորությունն այն է, որ բացի վերոհիշյալ առիթից Լևոնը առհա-
սարակ չի վստահում առաջիկա սեզոնի ամբողջ պատասխանատվությունը
վերցնելու իր վրա, և նրան դեռ ժպտում է Բարվում մի քանի բեմադրություն-
ներ տալու հեռանկարը:

Գալով Բուրջայանին պետք է ասեմ, որ ես դեռ հուլիսի 14-ին, վարչու-
թյան հանձնարարությամբ, նամակ էի գրել նրան, խնդրելով պատասխանել,
թե երբ և ինչ պայմաններով նա է վիճակի կլինի գալ Երևան իր բեմադրու-
թյունների վրա աշխատելու համար: Այս նամակին նա պատասխանել էր շատ
կարճ ու կտրուկ այն իմաստով, որ նա վերավորված է վարչությունից և բա-
նակցություններ վարել չի ցանկանում: Վերավորվելու պատճառն էլ իբր թե
այն է, որ վարչությունը չի բավարարել նրան կոմպենսացիոն վարձատրու-
թյամբ և այդ հարցը հանձնել է ԳԿՀ****-ին:

* Николай Кечекезян—актер, выступал на сцене Армянской драматической студии при Доме культуры Советской Армении в Москве.

* ետսքը Լևոն Բալանթարի մասին է:

** Առաջին պետքատրոնի դերասաններից են:

*** ետսքը, ամենայն հավանականությամբ, դերասան Կարո Առաքելյանի մասին է:

**** Գերագույն Կենտրոնական հանձնաժողով:

Այստեղ գալով ես առաջին հերթին տեսակցութիւն ունեցա Բուրջալյանի հետ, մանրամասն բացատրութիւններ տվի նրան հետաքրքրող հարցերի մասին և փարատեցի կասկածները։ Նրան մեծ մտահոգութիւն էր պատճառում Գավրոշը, որի հետ աշխատելուց նա բացարձակապէս հրաժարվում է։ Նա համաձայնեց ի վերջո աշխատելու Երեանում, ինչպէս խոստացել է Ձեզ, եթէ միայն Հայաստան խորհուրդը թույլատրի այդ։ Մենք գնացինք միասին ընկ. Արշավիր Մելիքյանի մոտ և եկանք այն համաձայնութեան, որ Բուրջալյանին կթույլատրվի հոկտեմբերի 19-ից հետո մոտ մի ամսով Երեան գալու և երկու բեմադրութիւն տալու համար։ Ըստ հնարավորին կիւուլատրվի նրան և գարնանը մի ամսով Երեան գալու։

Այստեղ ես մոտիկից ծանոթացա Մոսկվայի «Դիմակների թատրոնի» (Театр масок) ղեկավար ընկ. Կոնստ[անտին] Մելիք-Փաշայանի հետ։ Նրա մասին մեծ գովասանքով էր արտահայտվում Երեանում ընկ. Դրաստամատ Տեր-Սիմոնյանը****։ Այստեղ էլ նրան գովում են շատերը։ Սակայն ընկ. ընկ. Բուրջալյանի և Արշ[ավիր] Մելիքյանի կարծիքն այն է, որ նա չի կարող ստանձնել մեր թատրոնի ղեկավար ռեժիսորի պաշտոնը։ Ինքը արամադիր է Երեանում աշխատելու և մինչև սեպտեմբերի 10-ը մնալու է Թիֆլիսում և սպասելու մեր պատասխանին։

Իմացա ես այստեղ, որ Ռոստովում կա մի շատ հմուտ հայ ռեժիսոր—Августов (Ալեքսանդր Ալաշայան), որ աշխատում է ուսաց բեմի վրա և այս տարի մեծ հաջողությամբ բեմադրել է «Зойкина квартира», «Любовь Яровая», «Любовь под вязами» պիեսները։ Իբր թե նա էլ տրամադրութիւն ունի Հայաստան գալու։ Բուրջալյանը նրա մասին լսել է և խորհուրդ է տալիս նրա հետ բանակցութիւններ սկսելու։ Մտադրութիւն ունի ես այստեղ տեսնվելու և Քափանկյանի***** հետ, նրա դիտավորութիւններն իմանալու համար, բայց տարաբախտ[աբ]ար նա ներկայումս գտնվում է Կիւովոգոսկում։ Ինչպէս տեղեկացա այստեղ իմ ազգական Մինաս Գևորգյանից (Սիմոնովի ընկերն է և թատերական գործիչ), Մոսկվայում կան մի քանի հմուտ ուսուցիչներ, որոնք կհամաձայնվեն մի կամ երկու սեզոնով Երեան գալու բավականին համեստ վարձատրութեամբ։ Նրանք բոլորն էլ Ստանիսլավսկու աշակերտներն են և Սիմոնովի ընկերները։ Николай Васильевич Демидов, Алексей Дмитриевич Попов, Владимир Николаевич Татаринов և Валентин Сергеевич Смышляев.

Երեանում լուր կար, որ Դուր անցնելու եք Մոսկվա՝ արձակուրդից վերադառնալուց առաջ։ Այդ ղեկըրում գուցե Դուք հնարավոր գտնեիք վերահիշյալ թեկնածուների մասին տեղեկութիւններ հավաքելու և մեղ համապատասխան կարգադրութիւն անելու։ Մեր կարծիքը (Յաղությանի, Կարոյի և իմ) այն է, որ ներկա պայմաններում մենք Քափանկարի և Բուրջալյանի հույսով ապրել չենք կարող և անպայման պետք է մեկ հմուտ մշտական ղեկավար ռեժիսոր հրավիրենք։

**** Դրաստամատ Տեր-Սիմոնյան—այդ ժամանակ եղել է ՀԽԶ պետհրատի Մոսկվայի բաժանմունքի վարիչը։

***** Ստեփան Քափանկյան—ռեժիսոր։ Դասավանդել է Մոսկվայի հայկական դրամատիկական ստուդիայում։

Արուս Ոսկանյանը վերջնականապես հրաժարվեց առաջիկա սեզոնում մեզ մոտ աշխատելուց: Մենք Հեռի միջոցով առաջարկեցինք ժամանել մեզ մոտ աշխատելու, նա հեռագրով պատասխանել էր, որ երկու շաբաթից հետո վերջնական պատասխան կտա, սակայն արդեն ամիս է անցել և պատասխան չկա: Սերարը***** Բորժոմում է: Ընկ. Մակինցյանն ասաց, որ անկախ նրանից, թե ինքը որտեղ է լինելու ձմեռը, Սեբարը թերևս համաձայնվի մեզ մոտ աշխատելու, որովհետև այդպիսի ցանկություն ունեւր: Թվում է, որ մենք կարող կլինենք նրան հրավիրել:

Այսօր ես մեկնում եմ Երևան: Այնտեղ, իհարկե, այս բոլոր հարցերը կքննենք և մի կերպ կլուծենք:

Թատրոնում աշխատանքներն սկսվեցին օգոստոսի 9-ին: Բոլոր դերասանները եկել էին ժամանակին, բացի Լյուսին Մեղնիկյանից: Առաջին հերթին պատրաստվում է Բաղդասարյանի***** «Արյունոտ անապատում» պիեսը: «Պուրգալի» («Բուք»)***** թարգմանությունը ես արդեն կատարել, վերջացրել եմ: «Գալլերի» թարգմանությունը կատարում է Հեռը:

Շտապում եմ նամակը հասցնել փոստին:

Հարգանքներով՝ Մ. Գևորգյան*****

Ֆ. 122, ց. 2ա, գ. 178, թթ. 79—82, Բնագիր, Զեռագիր:

16

1 սեպտեմբերի 1927 թ., Կիսովոդսկ

Ընկ. Մռավյան

Աբրահամյանը* Մոսկվայից գրում է, որ «մեր» տպարանի մեքենաները ծախում են. ինչպես երևում է, այնտեղ պետհրատի անունից վեբսիլներ են տվել և այդ պարտքերը գոցելու համար վաճառում են մեքենաները: Մինչև այժմ միայն մեկն է վաճառվել, բայց երևի ուրիշներն էլ կվաճառվեն: Ցանկալի էր, որ ընկ. Սահակ Տեր-Գաբրիելյանին մի երկտող զրեթք և առաջարկեթք, որ մեացած մեքենաներն ու շրիֆտները ուղարկեն մեզ՝ Երևան. ճանապարհածախսը մենք մեզ վրա կառնենք: Այնտեղ կան մեքենաներ և մատերիալ, որոնք կլրացնեն մեր տպարանների պակասները:

Առաջները Սահակը մի գրությամբ հայտնում էր թեզ, որ պատրաստ է անել այն, ինչ դուք հարմար կգտնեք: Կարևոր էր օգտվել այդ առաջարկից և խնդրել, որ տպարանի բոլոր մեացորդները մեզ ուղարկվեն:

Պետք է շեշտել գրության մեջ, որ լուսժողովմատն իր տպարանական բազան պահում է և անհրաժեշտ է լրացումներ՝ պետհրատի ամբողջ հրատարակչական գործը կատարելու համար: Իս այդ առիթով գրեցի նաև ընկ. Շամշյանին**, որ մտնի ընկ. Յաղուբյանի մոտ և միասին նույն իմաստով մի գրություն ուղարկեն Մոսկվա:

***** Իվգինե Սերար—դերասանուհի. աշխատել է Թբիլիսիի հայկական թատրոնում:

***** Խոսքը դրամատուրգ Ստեփան Բաղդասարյանի մասին է:

***** Բ. Շչեգովի գրաման է:

***** Մամիկոն Գևորգյան—առաջին պետթատրոնի ղեկավարը:

* ՇՄԶ պետհրատի Մոսկվայի բաժանմունքի աշխատակից:

** ՇՍԽԶ պետհրատի աշխատակից:

Ներփակ գրությունը տեղեկություն է տալիս ղյուսագրերի մասին, նա մեկնում է մամսի 6-ին:

Բարեներով՝ Սեառ

Յ. 122, ց. 2ա, դ. 178, թ. 78, Բնագիր, Ձևագիր:

17

1927 թ., Մոսկվա

Սիրելի Ասաֆ

1. Մոտավորապես մի երեք շաբաթ առաջ քեզ նամակ էի գրել, այդտեղ մանրամասն տեղեկություններ էի տվել նկարների դյուբյան և ընդհանրապես տեղիս գործերի մասին: Նկարների տրամադրելը լենինգրադի տեղական պաշտոնյաները երկար ժամանակ ձգձգում էին: Մոտավորապես մեկ և կես ամիս առաջ զնացի լենինգրադ և Արտաշեսի* հետ այնտեղ վերջացրինք բոլոր հարցերը: Բացի այն ցուցակից, որ ես ստացա Եփրոսից, Արտաշեսին հաջողվել էր մի նոր ցուցակով ստանալ բավականաչափ նկարներ՝ զլխավորապես ռուս նկարիչների: Ես Մոսկվայից փող բաց թողի Դյուբյանին** իրերը կապելու և ուղարկելու համար: Մոսկվայից արդեն տեղափոխեցինք մեկ վագոն իրեր, երեք տեղումդ արդեն ստացված կլինի: Կարատե*** զալիս է և հետը բերում է հին փողեր և արժեքավոր ձեռագրեր: Միաժամանակ նրան և ստուդիայի**** զեղխորհրդի քարտուղարին հանձնարարված է քեզ իրադեկ դարձնելու ստուդիայի աշխատանքներին և ստանալու համապատասխան հրահանգներ նրա անելիքների մասին:

2. Խնդիրն այն է, որ այս տարի ստուդիան արագ տեմպով է պարապում: Բեմադրվեց «Պեպոն»—բավական հաջող: Պատրաստում են լոնդոնի «Փայլի Նոգիններ», որ կբեմադրվի մարտի վերջին:

Ստուդիականները խնդրում են Բարխուդարյանի***** գործերը: Ընդհանրապես է հեղափոխական երկերի ժողովածուի, պատրաստում է «Կյանք և երաժշտություն» թերթի 2-րդ համարը, պատրաստում է նաև ինստիտուտների կադր՝ ամառը Հայաստան զալու համար:

3. Հրատարակչական գործերն ընթանում են ավելի արագ տեմպով: Մեր նոր պլանը ուղարկել ենք ի հաստատություն, խնդրում ենք ուղարկես ջո գրած հոդվածները: Ջիմմի Խիգինսի մասին՝ իբրև նախաբան տպագրելու համար:

Բարեներով՝ Դրաստամատ*****

Յ. 122, ց. 2ա, դ. 178, թթ. 142—144, Բնագիր, Ձևագիր:

* Խոսքն Արտաշես Կարինյանի մասին է:

** Բուրեն Դրամյան—արվեստարան, Այդ տարիներին աշխատել է Հայաստանի պետական թանգարանում:

*** Տեքստում այսպես է:

**** Խոսքը Մոսկվայի հայկական կուլտուրայի տանը կից դրամատիկական ստուդիայի մասին է, Հիմնադրվել է 1918 թ.:

***** Ամենայն հավանականությամբ, խոսքը թարգմանիչ, խմբագիր-հրատարակիչ Մկրտիչ Բարխուդարյանի մասին է, որն այդ ժամանակ աշխատել է Մոսկվայում:

***** Դրաստամատ Տեր-Սիմոնյան: